

ՀԱՆՐԱՊԵՏԱՅԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԵՏ

16.06.2014



2014 թվականի հունիսի 16-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում աշխատանքային հանդիպում է տեղ ունեցել Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին երկրորդի և ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանի միջև՝ վերջինիս խնդրանքով: Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքում գտնվող եկեղեցիների, վանքերի, եկեղեցապատկան այլ շինությունների վերանորոգման և շահագործման, որոշ տարածքներում նախատեսվող ծրագրերի, հոգևոր կյանքի կազմակերպմանն առնչվող հարցեր: